

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 338.657

DOI: 10.52063/25792652-2024.4.23-188

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Զոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտի
ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
knersisyan@mail.ru
ORCID: 0000-0003-4715-8692

Ցանկացած տնտեսական պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության տնտեսական գործունեության պրակտիկայում դրամական հոսքերի ձևավորման գործընթացը ամենաբարդ խնդիրներից մեկն է:

Որպես կանոն, դրանց լուծման գործում մեծ նշանակություն ունեն մի շարք խնդիրների հայտնաբերումը և լուծումը, ինչպիսիք են դրամական ռեսուրսների բավարարվածությունը, դրանց պլանավորման և վերաբաշխման մեխանիզմը և օգտագործման օպտիմալ դեպքերը:

Ուսումնասիրությունում ներկայացվում են առևտրային կազմակերպություններում դրամական հոսքերի ձևավորման և դրանց վրա ազդող գործոնների առանձնահատկությունները, հիմնավորվում է այդ գործընթացում հաշվարկային ցուցանիշների կիրառման մոտեցումների օգտագործման անհրաժեշտությունը: Զննարկվել են նաև կազմակերպության դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող գործոնները, և կոնկրետ ընկերության օրինակով կատարվել է դրանց ձևավորման վերլուծություն:

Ուսումնասիրության նպատակը միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի ձևավորման, դրանց վրա ազդող գործոնների բացահայտման և գնահատման տեսական դրույթների ուսումնասիրությունը և գործնական առաջարկությունների մշակումն է՝ ուղղված ՀՀ առևտրային կազմակերպություններում ֆինանսական հոսքերի կառավարման կատարելագործմանը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական, տրամաբանական, վերլուծական, ֆինանսական ցուցանիշների համադրման և գործոնային կախվածության հաշվարկման մեթոդներ:

Ուսումնասիրության մեջ օգտագործվել են առանձին կազմակերպության վերջին չորս տարիների ֆինանսական հաշվետվությունների տվյալները, որոնք ներկայացված են ընկերության պաշտոնական կայքում:

ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության կառավարման համակարգի որակը բարելավելու համար պետք է մշակվեն դրամական հոսքերի տնտեսական վերլուծության մեթոդական գործիքակազմի կատարելագործման տեսական, մեթոդական դրույթներ և գործնական առաջարկություններ:

Հաշվի առնելով ֆինանսական հոսքերի վրա ազդող գործոնների վերլուծության և դրանց ազդեցությունը գնահատելու ժամանակակից մեթոդները՝ մշակվել են կոնկրետ առաջարկություններ՝ ՀՀ տնտեսության իրական հատվածում դրանք ներդնելու համար:

* Հոդվածը ներկայացվել է 10.10.2024թ., գրախոսվել՝ 11.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Հիմնաբառեր՝ դրամական հոսքեր, հաշվարկային փաստաթղթեր, ազդող գործոններ, թվային աջակցություն, արդյունավետության գործակից, համարժեքության գործակից, մեթոդաբանական և մեթոդական մոտեցումներ:

Ներածություն

Դրամական հոսքերը կոչված են զարգացնելու արտադրությունը և արձագանքելու տնտեսության՝ ժամանակակից զարգացմամբ թելադրված մարտահրավերներին: Դրանց կարգավորման հիմնական նպատակը դրամական միջոցների արագ տեղափոխման, դրամական հաշվարկների շրջանառության արագացման և հաշվարկների շրջանառության ապահովումն է:

Հաշվետվությունների հիմնական ձևը, որը շահառուներին հնարավորություն է տալիս վերլուծել դրամական միջոցների մուտքերը և դրանց օգտագործումը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունն է: Այն պարունակում է համապատասխան տեղեկատվություն, որը թույլ է տալիս գնահատել դրամական միջոցների հոսքերի կառավարման արդյունավետությունը և վերլուծել կազմակերպության տնտեսական գործունեությունը՝ որպես ամբողջություն:

Կազմակերպության հիմնական գործունեության արդյունքում ձևավորված ֆինանսական հոսքն ունի հետևյալ առանձնահատկությունները.

1. Հիմնական գործունեությունը կազմակերպության ողջ տնտեսական գործունեության գլխավոր բաղադրիչն է, որոշում է դրա պրոֆիլը, այդ իսկ պատճառով դրա ֆինանսական հոսքն ունի ամենամեծ մասնաբաժինը կազմակերպության ընդհանուր ֆինանսական հոսքում:

2. Հիմնական գործունեության ձևերն ու մեթոդները կախված են ճյուղային առանձնահատկություններից, ուստի՝ տարբեր կազմակերպությունների դրամական հոսքերի ցիկլերը տարբեր են:

3. Կազմակերպության հիմնական գործունեությունը որոշող տնտեսական գործարքները տարբերվում են իրենց կանոնավորվածությամբ, որը ֆինանսական ցիկլը բավականին պարզ է դարձնում:

4. Կազմակերպության գործունեությունը հիմնականում կենտրոնացված է ապրանքային կամ ծառայությունների շուկաների վրա, հետևաբար դրամական հոսքը կապված է այդ շուկաների և դրանց առանձին հատվածների վիճակի հետ:

5. Ընթացիկ գործունեության ֆինանսական հոսքերին բնորոշ են ռիսկերի հատուկ տեսակներ, որոնք միավորվում են "գործառնական ռիսկեր" հասկացության մեջ, և որոնք կարող են խախտել ֆինանսական ցիկլը:

6. Հիմնական գործունեությունը գործնականում շահույթի հիմնական աղբյուրն է, հետևաբար, այն նաև դրամական միջոցների հիմնական աղբյուրն է:

Զննարկենք կազմակերպության ներդրումային գործունեության արդյունքում ձևավորված ֆինանսական հոսքերի կազմավորման և արդյունավետ օգտագործման հիմնական առանձնահատկությունները:

1. Կազմակերպության ներդրումային գործունեությունը կրում է ընթացիկ գործունեության ենթակա բնույթ, հետևաբար, ներդրումային գործունեությունից ֆինանսական ռեսուրսների ներհոսքերն ու արտահոսքերը պետք է որոշվեն ընթացիկ գործունեության զարգացման տեսլակով:

2. Ներդրումային գործունեության ձևերն ու մեթոդները շատ ավելի փոքր չափով կախված են կազմակերպության ճյուղային առանձնահատկություններից, հետևաբար՝ տարբեր կազմակերպություններում ներդրումային գործունեության ֆինանսական հոսքերի ցիկլերը, որպես կանոն, նույնական են:

3. Ժամանակային առումով ներդրումային գործունեությունից ֆինանսական ռեսուրսների ներհոսքը, որպես կանոն, զգալիորեն տարբերվում է արտահոսքից, այսինքն՝ ցիկլը բնութագրվում է երկար ժամանակային պարբերությամբ:

4. Ներդրումային գործունեությունն ունի տարբեր ձևեր (օրինակ՝ ձեռքբերում, շինարարություն և այլն) և ֆինանսական հոսքերի տարբեր ուղղվածություն՝ ժամանակի տարբեր հատվածներում:

5. Ներդրումային գործունեությունը կապված է ապրանքային և ֆինանսական շուկաների հետ, որոնց տատանումները հաճախ չեն համընկնում, ուստի՝ դրանք կարող են տարբեր կերպ ազդել ներդրումային ֆինանսական հոսքերի վրա:

Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ կազմակերպության սովորական գործունեությունից ստացվող հասույթ ապահովող դրամական հոսքերն են: Դրանք թույլ են տալիս գնահատել գործառնական գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական հոսքեր գեներացնելու կազմակերպության ունակությունը, ինչպես նաև արտադրական հզորությունների ավելացմամբ պայմանավորված արտադրանքի իրացման աճի միտումները:

Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից՝ դրանք կազմակերպության կողմից արտաշրջանառու ակտիվների ստեղծման, ձեռք բերման կամ շրջանառությունից դուրս գալու հետ կապված գործառնականություններից առաջացող դրամական հոսքերն են:

Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ դրանք պարտքային կամ բաժնային ֆինանսավորման հիմքերով կազմակերպության կողմից ներգրավման հետ կապված դրամական հոսքերն են, որոնք կազմակերպության կապիտալի կառուցվածքի և

Գծապատկեր 1. Դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ օգտագործվող հաշվարկային փաստաթղթերը (Горбунова Олеся Сергеевна, Кот Екатерина, 170)

6. Զանի որ բիզնեսի բարեհաջող վարմամբ կազմակերպությունը ձգտում է ընդլայնել և արդիականացնել արտադրական կարողությունները, ներդրումային գործունեությունը՝ որպես ամբողջություն, հանգեցնում է կազմակերպության

Ֆինանսական ռեսուրսների չօգտագործմանը՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար: Իր հերթին, ներդրումային գործունեությունը նույնպես համարվում է ֆինանսավորում՝ տվյալ կազմակերպության համար:

Կազմակերպության գործունեության երրորդ ուղղությունից՝ ֆինանսական գործունեությունից, դրամական հոսքերի ձևավորման և օգտագործման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել դրանց հետևյալ առանձնահատկություններին:

1. Ֆինանսական գործունեությունը կրում է ընթացիկ և ներդրումային գործունեություններից կախված բնույթ, հետևաբար՝ ֆինանսական գործունեությունից ֆինանսական հոսքը պետք է ձևավորվի ոչ թե ի վնաս կազմակերպության ընթացիկ և ներդրումային գործունեության, այլ դրանց համընթաց:

2. Ֆինանսական գործունեության ֆինանսական հոսքերի ծավալը պետք է կախված լինի ժամանակավորապես ազատ դրամական միջոցների առկայությունից, այդ իսկ պատճառով ֆինանսական գործունեությունից ֆինանսական հոսքերը չեն կարող գոյություն ունենալ յուրաքանչյուր կազմակերպությունում և՛ ոչ մշտական:

3. Ֆինանսական գործունեությունը անմիջականորեն կապված է ֆինանսական շուկայի հետ և կախված է դրա վիճակից: Չարգացած և կայուն ֆինանսական շուկան կարող է խթանել կազմակերպության ֆինանսական գործունեությունը և, որպես արդյունք, ապահովել այդ գործունեության ֆինանսական հոսքի աճ և հակառակը:

4. Ֆինանսական գործունեությանը բնորոշ են ռիսկերի հատուկ տեսակներ՝ ֆինանսական ռիսկեր, որոնք բնութագրվում են յուրահատուկ վտանգով և էապես ազդում են ֆինանսական հոսքի վրա:

Դրամական հոսքերի օպտիմիզացման ամենակարևոր նախադրյալը ժամանակի ընթացքում դրանց ծավալի և ձևավորման բնույթի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրությունն է:

Կազմակերպության դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների համակարգը ներկայացված է Գծապատկեր 2-ում:


Դրամական հոսքերի օպտիմալացման ամենակարևոր նախապայմանը ժամանակի ընթացքում դրանց ծավալի և ձևավորման բնույթի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրությունն է:

Դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող գործոնների ցանկը, մեր կարծիքով, պետք է լրացվեն "Ժամանակակից ֆինանսական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում" արտաքին միջավայրի գործոններով, որոնք օպտիմալացնում և ավտոմատացնում են տարբեր ֆինանսական առաջադրանքները, ապահովում են իրական ժամանակում ֆինանսական տվյալների հասանելիությունը դա թույլ է տալիս կազմակերպություններին կայացնել տեղեկացված որոշումներ և արագ արձագանքել շուկայի փոփոխություններին:

Ֆինանսական հոսքերին աջակցելու համար թվային տեխնոլոգիաների և համակարգերի օգտագործումը նպաստակ ունի բարելավել ֆինանսական գործարքների արդյունավետությունը, ճշգրտությունը և թափանցիկությունը: Կազմակերպության ֆինանսական հոսքերի էլեկտրոնային կառավարումը, օգտագործելով տեխնոլոգիաներ և թվային գործիքներ, պետք է նպաստի բիզնեսի ֆինանսական գործընթացների օպտիմալացմանը: Շատ առումներով այս խնդիրը լուծվում է էլեկտրոնային հաշվետվությունների միջոցով, որոնցում տեղեկատվության գաղտնիությունն ապահովվում է հատուկ հաղորդակցման ուղիներով, և էլեկտրոնային ստորագրությունը որոշում է փաստաթղթի իրավական կարգավիճակը:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական կառավարման մեջ թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային աջակցության ինտեգրումը զգալիորեն մեծացնում է ժամանակակից կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և մրցունակությունը:

Գծապատկեր 2. Կազմակերպության դրամական հոսքերի ձևավորման վրա ազդող գործոնները (Коновалова, 9):



Ընկերության ֆինանսական հոսքերի թվային աջակցությունը ենթադրում է թվային տեխնոլոգիաների և համակարգերի օգտագործում՝ կազմակերպության կառավարման ֆինանսական գործարքներին և գործընթացներին հետևելու և օպտիմիզացման համար:

- Առցանց բանկային և վճարային համակարգերը ենթադրում են առցանց հարթակների օգտագործումը բանկային գործառնությունների կառավարման համար՝ ներառյալ իաշիվների վճարումը, վճարումների ստացումը և միջոցների փոխանցումը:

- Հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովումը ենթադրում է ծրագրային ապահովման օգտագործում՝ հաշվապահական հաշվառման գործընթացները ավտոմատացնելու համար, որոնցից են հաշվապահական հաշվառումը, հաշիվ-ապրանքագրերը և ֆինանսական հաշվետվությունները:

- Հաշիվների էլեկտրոնային ներկայացումը ենթադրում է էլեկտրոնային համակարգերի օգտագործում՝ դրանց ստեղծման, բաշխման և վճարման գործընթացները կառավարելու համար. դա թույլ է տալիս կրճատել ձեռքով մշակումը և բարձրացնել արդյունավետությունը,

- Ֆինանսների կառավարման թվային գործիքը թվային գործիքների օգտագործումն է՝ ֆինանսական տվյալների կառավարման և տեղեկացված որոշումների կայացման համար՝ ներառյալ բյուջետավորման ծրագրային ապահովումը, կանխատեսման գործիքները և ֆինանսական վերլուծության

հարթակները:

• Բլոկչեյն տեխնոլոգիանապակենտրոնացված, անվտանգ և թափանցիկ հաշվապահական հաշվառման համակարգերի օգտագործումն է՝ ֆինանսական գործարքներին հետևելու և ավելի մեծ թափանցիկություն ու անվտանգություն ապահովելու համար:

Աղյուսակ 1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ դրամական հոսքերի շարժը 2020-2023 թթ մլն. դրամ

Ցուցանիշը	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.	Շեղումը 2023 թ. 2020 թ. նկատմամբ
Դրամական հոսքերն ընթացիկ գործունեությունից*					
Մուտքեր՝ ընդամենը	34086,323	34110,188	36168,302	37416,914	3330,591
Վճարումներ՝ ընդամենը	-27929,919	-23864,957	-27986,733	-29313,850	-1383,931
Ընթացիկ գործունեությունից դրամական հոսքերի սալդո հաշվետու տարվա վերջին	6156,404	10245,231	8181,569	8103,064	1946,66
Դրամական հոսքերը ներդրումային գործունեությունից					
Մուտքեր՝ ընդամենը	19758,445	2435,986	2172,420	9229,291	-10529,154
Վճարումներ՝ ընդամենը	-5264,563	-14326,919	-21405,098	-17197,430	-11932,867
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	14493,882	-11890,933	-19232,678	-7968,139	-22462,021
Դրամական հոսքերը ֆինանսական գործունեությունից					
Մուտքեր՝ ընդամենը	4941,895	7058,409	20524,762	9820,280	4878,385
Վճարումներ՝ ընդամենը	-28995,138	-4151,174	-10173,971	-9584,669	19410,469
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	-24053,243	2907,235	10350,791	235,611	24288,854
Դրամական հոսքերի սալդո՝ հաշվետու տարվա վերջին	-3402,957	1261,533	-700,318	370,536	3773,493
Դրամական հոսքերի սալդո հաշվետու տարվա վերջին՝ ներառյալ դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա փոխարժեքային տարբերությունները*	-3351,75	1251,534	-851,26	373,962	3725,712

Վերլուծություն

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ կապի ոլորտի «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ դրամական հոսքերի ձևավորման գործընթացը՝ 2020-2023 թթ.:

*-Ներառյալ փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա

Ուսումնասիրվող կազմակերպության դրամական հոսքերը ձևավորվում են գործունեության բոլոր երեք՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական տեսակներից:

Հարկ է նշել, որ դրամական հոսքերի մեծ մասը ձևավորվում է գործառնական գործունեությունից: 2023 թվականին այն կազմել է 66,3 տոկոս, որը վկայում է ընթացիկ գործունեությունից դրամական միջոցներ գեներացնելու ընդունակության մասին: Ընդ որում այդ գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները բոլոր չորս հաշվետու տարիների վերջերին միշտ եղել են դրական:

Ներդրումային գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները 2021-23 թվականների հաշվետու տարվա վերջերին եղել են բացասական դա կարող է ստացած վարկերի, փոխառությունների վերադարձի և այլ վճարումների հետևանք լինել:

Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի մնացորդները 2020-23թթ հաշվետու տարվա վերջերին եղել են դրական, սա հնարավոր է եղել ապահովել այդ գործունեության գծով դրամական հոսքերի մուտքերի զգալի աճի շնորհիվ:

Դրամական միջոցների հոսքերի ձևավորման արդյունավետությունը բնութագրվում է՝

դրամական միջոցների հոսքի արդյունավետության գործակցով, որը հաշվարկվում է որպես զուտ դրամական հոսքերի և ընդհանուր բացասական դրամական հոսքերի հարաբերակցություն (ձևավորված գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության արդյունքում),

- զուտ դրամական միջոցների հոսքի համարժեքության գործակցով, որը հաշվարկվում է որպես զուտ դրամական միջոցների հոսքի հարաբերակցություն՝ վարկերի գծով հիմնական պարտքի, ապրանքանյութական պաշարների աճի և վճարված շահաբաժինների գումարին,

– զուտ դրամական հոսքի վերաներդրման գործակից, որը ցույց է տալիս կազմակերպության սեփական միջոցների հաշվին որոշակի ժամանակահատվածում իրական ներդրումներ և երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ կատարելու հնարավորությունը (դրական զուտ դրամական հոսքերի ձևավորման արդյունքում) (Сokolov 2023):

Դրամական հոսքերի արդյունավետության գործակցի նորմատիվային արժեքը պետք է հավասար կամ մեծ լինի զրոյից: Ուսումնասիրվող կազմակերպությունում այն գտնվում է բավականին ցածր մակարդակում՝ 2023 թ.-ին կազմել է 0,007, իսկ 2020 - 2022 թթ.-ին բացասական էր (Бычкова, Бадмаева 27):

Չուտ դրամական հոսքերով համարժեքության գործակցի նորման սահմանված է մեծ կամ հավասար 1-ի: Դիտարկվող կազմակերպությունում ցուցանիշը գիջում է նշված նորմային, այսինքն՝ կազմակերպությունը չի ունեցել բավարար զուտ դրամական հոսքեր ավելի արդյունավետ գործունեության համար:

Իսկ դրամական հոսքերի վերաֆինանսավորման գործակցի հաշվարկը հնարավոր չէ կատարել միայն ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա, որոնցում չեն ներկայացվում տվյալներ՝ անկանխիկ եղանակով կատարված ծախսերի և ստացած եկամուտների վերաբերյալ (Мырavyeva 21-24):

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության արդյունքում կարելի է գալ այն հետևության, որ հայրենական, գիտական և մասնագիտական շրջանակներում դեռևս անհրաժեշտ խորությամբ և ծավալով չեն մշակվում ու ներկայացվում ֆինանսական և դրամական հոսքերի ձևավորման գործընթացի տեսական դրույթները, դրանց գործնական

դրսևորման առանձնահատկությունները, առկա խնդիրներն ու չեն կատարվում դրանց լուծման վերաբերյալ գործնական առաջարկություններ հատկապես տնտեսության իրական հատվածում:

Որպես կանոն, դրանց լուծման գործում մեծ նշանակություն ունեն մի շարք խնդիրների հայտնաբերումը և լուծումը, այդպիսիք են դրամական ռեսուրսների բավարարվածությունը, դրանց պլանավորման և վերաբաշխման մեխանիզմը և օգտագործման օպտիմալ դեպքերը:

Դրանցում դեռևս չեն ներդրվել ֆինանսական հոսքերի հաշվառման ու վերլուծության ժամանակակից մեթոդներ և եղանակներ՝ ինչպես հաշվապահական հաշվառման ու վերլուծության ոլորտներում, այնպես էլ աուդիտի անցկացման պրակտիկայում:

Դրամական միջոցների հոսքերի արդյունավետ կառավարման համար ցանկացած խոշոր առևտրային կազմակերպության ղեկավարություն պետք է ունենա օպերատիվ, հուսալի և բավարար տեղեկատվություն, որը թույլ կտա ապահովել այս խնդրի լուծումը՝ հատկապես երկրի տնտեսության անկայունության պայմաններում:

Քանի որ հաշվապահությունը ցանկացած կազմակերպության հիմնական տեղեկատվական օղակն է, ուստի նրանում պետք է ձևավորվի կառավարման համար անհրաժեշտ դրամական հոսքերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները:

Սակայն ՀՀ-ում ո՛չ տեսականորեն և ո՛չ էլ հաշվապահական հաշվառման պրակտիկայում դրամական հոսքերը դեռևս չեն առանձնացվում որպես հաշվապահական հաշվառման անկախ օբյեկտ, որի պատճառով դեռևս չեն կիրառվում անհրաժեշտ տեսական-մեթոդաբանական և մեթոդական մոտեցումները, այդ հանգամանքը թույլ կտա մշակել հաշվապահական հաշվառման մատյանների ձևեր և ներքին հաշվետվություններ, որոնք, ընդհանուր առմամբ, կապահովեն այս խնդրի լուծումը հաշվառման պրակտիկայում:

Ներկայումս կարևորվում է ճյուղավորված կառուցվածքով խոշոր առևտրային կազմակերպություններում դրամական հոսքերի խնդիրները համակարգային մոտեցման շրջանակներում դիտարկելու անհրաժեշտությունը՝ դրանք դասակարգելով ըստ ձևավորման աղբյուրների, նպատակների, ժամանակի, գործունեության տեսակների, ստորաբաժանումների, դա հնարավորություն կտա իրական ժամանակում գնահատել յուրաքանչյուր ստորաբաժանման կարողությունը՝ դրամական հոսքեր ձևավորելու, ինչպես նաև դրամարկղերում և հաշվարկային ու այլ հաշիվներում դրամական միջոցների մնացորդների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն 31 դեկտեմբերի 2020-2023թթ.», <https://bit.ly/4f3gCR0>: Վերջին մուտք՝ 06.12.2024:

2. Соколов, Егор. «Анализ денежных потоков компании», // Dasreda, 2023, <https://dasreda.ru/media/for-managers/analiz-denezhnykh-potokov-kompanii>. Accessed: 06.12.2024.

3. Горбунова, Олеся, Кот, Екатерина и другие. «Оценка денежных потоков и пути их оптимизации». *Образование и право*, 2023, с. 168-174, <https://cyberleninka.ru/article/n/otsenka-denezhnykh-potokov-i-puti-ih-optimizatsii>, Accessed: 06.12.2024.

4. Бычкова, Светлана, Бадмаева, Дина. «Методика анализа денежных средств и денежных потоков организации».

http://controlcashflow.ru/publ/metody_analiza_denezhnykh_potokov/metodika_analiza

[denezhnykh sredstv i denezhnykh potokov organizacii/3-1-0-69.](#)

Accessed:

06.12.2024:

5. Муравьева, Наталья. «Критерии эффективности управления денежными потоками в коммерческих организациях» // *Экономика и бизнес: теория и практика*, №5, 2015, стр. 21-24.

WORKS CITED

1. «TELEKOM Armenia» P'BY'. «Finansakan hashvetvut'yunneri mijazgayin standartnerin hamapatasxan` finansakan hashvetvut'yunner ev ankax auditorakan ezrakacut'yun 31 dektemberi 2020-2023t't'.», [In accordance with the International Financial Reporting Standards, Financial Statements and an Independent Auditor's Opinion for December 31, 2020–2023], <https://bit.ly/4f3gCR0>, Verjin mutq 6/12/2024. (In Armenian).

2. Sokolov Egor. «Analiz denezhnyh potokov kompanii», // Dasreda, <https://dasreda.ru/media/for-managers/analiz-denezhnykh-potokov-kompanii>, [Analysis of the Company's Financial Flows], 2023. (In Russian)

3. Gorbunova Olesja Sergeevna, Kot Ekaterina Mihajlovna i drugie. «Ocenka denezhnyh potokov i puti ih optimizacii». *Obrazovanie i pravo*, 2023, s. 168-174, <https://cyberleninka.ru/article/n/otsenka-denezhnyh-potokov-i-puti-ih-optimizatsii>, [Assessment of Cash Flows and Ways to Optimize them], 2023. (In Russian).

4. S.M. Bychkova, D.G. Badmaeva. «Metodika analiza denezhnyh sredstv i denezhnyh potokov organizacii». http://controlcashflow.ru/publ/metody_analiza_denezhnykh_potokov/metodika_analiza_denezhnykh_sredstv_i_denezhnykh_potokov_organizacii/3-1-0-69, [Methodology for analyzing finance and financial flows of an organization], 2014. (In Russian).

5. Murav'eva Natal'ja Nikolaevna. «Kriterii jeffektivnosti upravlenija denezhnyimi potokami v kommercheskih organizacijah» // *Jekonomika i biznes: teorija i praktika*, №5, 2015, s. 21-24, [Criteria for the Effectiveness of Cash flow Management in Commercial Organizations], 2015. (In Russian).

PROCESS OF FORMATION OF FINANCIAL FLOWS IN COMMERCIAL ORGANIZATIONS OF THE RA

KAREN NERSISYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
the Institute of Economics after M. Kotanyan, Senior researcher
Yerevan, the Republic of Armenia*

In any economic condition, the process of cash flow formation in the practical activities of any organization is one of the most complex issues.

As a rule, solving this issue involves discovering and solving several problems, such as the sufficiency of financial resources, their planning and redistribution mechanisms, and optimal usage cases.

The study presents the features of cash flow formation in commercial organizations and the factors influencing them, substantiating the need for applying computational indicators in this process. The study also examines the factors influencing the formation of cash flows in an organization, and an analysis of their formation is conducted based on a specific company example.

The purpose of the study is to explore the theoretical provisions of cash flow

formation at the micro-level, identify and assess the factors influencing them, and develop practical recommendations aimed at improving financial flow management in commercial organizations in Armenia.

The research used comparative, logical, analytical, and methods for comparing financial indicators and calculating factor dependencies.

The study utilized data from the last four years of financial reports of a specific organization, which are published on the official website of the company.

The scientific novelty of the study is the development of theoretical and methodological provisions and practical recommendations for improving the quality of the management system of operational, investment, and financial activities in organizations of the real sector of the Armenian economy, through improving the methodological tools of economic analysis of cash flows.

Taking into account modern methods of analyzing and assessing the factors influencing financial flows, specific recommendations have been developed for their implementation in the real sector of the Armenian economy.

Keywords: *Cash flows, accounting documents, influencing factors, digital support, efficiency ratio, adequacy ratio, methodological and methodological approaches.*

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ФИНАНСОВЫХ ПОТОКОВ В КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ РА

КАРЕН НЕРСИСЯН

старший научный сотрудник

*Института экономики им. М. Котаняна при Национальной
академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

В любых экономических условиях процесс формирования денежных потоков в практической деятельности какой-либо организации является одной из самых сложных задач.

Как правило, решение этой задачи включает выявление и решение ряда проблем, таких как достаточность финансовых ресурсов, механизмы их планирования и перераспределения, а также оптимальные случаи их использования.

В исследовании представлены особенности формирования денежных потоков в коммерческих организациях и факторы, влияющие на них; обоснована необходимость применения расчетных показателей в этом процессе. Также рассмотрены факторы, влияющие на формирование денежных потоков в организации, и проведен анализ их формирования на примере конкретной компании.

Цель исследования — изучить теоретические положения формирования денежных потоков на микроуровне, выявить и оценить факторы, влияющие на них, а также разработать практические рекомендации, направленные на совершенствование управления финансовыми потоками в коммерческих организациях Армении.

В исследовании использованы методы сравнения, логического, аналитического анализа, а также методы сопоставления финансовых показателей и расчета факторных зависимостей. В исследовании использованы данные финансовых отчетов конкретной организации за последние четыре года,

опубликованные на официальном сайте компании.

Научная новизна исследования заключается в разработке теоретических и методических положений и практических рекомендаций для улучшения качества системы управления операционной, инвестиционной и финансовой деятельностью организаций реального сектора экономики Армении через совершенствование методологических инструментов экономического анализа денежных потоков.

С учетом современных методов анализа факторов, влияющих на финансовые потоки, разработаны конкретные рекомендации по их внедрению в реальный сектор экономики Армении.

Ключевые слова: *денежные потоки, учетные документы, факторы влияния, цифровая поддержка, коэффициент эффективности, коэффициент адекватности, методологические и методические подходы.*